Հարց

Ինչպիսի՞ պայմանների դեպքում է մատակարարը սկսում կազմակերպությունների գազամատակարարումը:

Պատասխան

Մատակարարը կազմակերպությունների գազամատակարարումն սկսում է հետևյալ պայմանների ապահովման դեպքում.

ա)գազասպառման համակարգը փորձարկվել և ստուգվել է, կազմվել են շահագործման ընդունման ակտը և գործարկման եզրակացությունը,

բ)կատարվել են միացման պայմանագրի բոլոր պայմանները,

գ)կազմակերպությունն ունի սպասարկող անձի հետ կնքված գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման պայմանագիր կամ համաձայնագիր մատակարարի հետ, կամ գազասպառման համակարգը շահագործող և սպասարկող մասնագիտացված անձնակազմ, ինչպես նաև կազմակերպության ստանդարտներ` անվտանգ շահագործման վերաբերյալ,

դ)մատակարարը կազմակերպության հետ կնքել է Պայմանագիր: